Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Պատմագրության ուսուցման մեթոդիկան բարձր դասարանում

Կատարող՝ Մարգարիտա Հովհաննեսի Ղազեյան Դպրոց՝ Ալ.Մյասնիկյանի անվան հ.66 հիմնական դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ Լեոյի անվան հ. 65 ավագ դպրոց
Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022

Պատմագրության ուսուցման մեթոդիկան բարձր դասարանում

Բազմադարյան պատմության ընթացքում հայ ժողովուրդը ստեղծել է հոգևոր և անսպառ գանձեր, հիշատակարաններ, որոնց մեջ քիչ չեն համաշխարհային ճանաչում ստացած գոհարները:

Հայ գրականության դպրոցական դասընթացի ուսուցման կարևոր խնդիրն է՝ աշակերտներին ծանոթացնել այդ գանձերին ու հարստություններին, նրանց տոգորել հայրենասիրության ոգով, խանդավառել ազգային արժանապատվության ու հպարտության այն զգացումով, որ իրենք հաջորդներն են քաջարի ու ստեղծագործ նախնիների:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության ընթացքում ստեղծվում են թե ժողովրդական և թե գրական բազմաքանակ ու բազմատեսակ ստեղծագործություններ, որոնց մեջ գեղարվեստական խոսքի ուժով պատկերված են հայ ժողովրդի շինարար աշխատանքը, ազատագրական պայքարի հերոսական դրվագները, ապրելակերպը, արտահայտված են նրա երազանքները, մտածմունքները, ձգտումները:

Մեր խնդիրն է՝այդ ստեղծագործությունների ուսումնասիրման միջոցով աշակերտներին տալ պատկերացում հայ ժողովրդի անցյալ, ներկա և ապագա կյանքի մասին, նրանց մեջ

լավագույն հատկություններ, դաստրարակել մարդկային վեհ գաղափարներ, գեղեցիկի զգացում, գեղարվեստական ճաշակ:

Գեղարվեստական ստեղծագործություններն այն ոսկյա գանձարաններն են , ու հավաքվում, կուտակվում, հղկվում, մշակվում, գեղեցկանում ու պահպանվում են մայրենի լեզվի բոլոր հարստությունները: Մեր խնդիրն է նաև զարգացնել ու կատարելագործել աշակերտների մեջ նրանց բանավոր ու գրավոր խոսքը:

Հայ գրականության ուսուցումը բարձր դասարաններում շարունակում, խորացնում է այն աշխատանքը, որ միջին դասարաններում կատարվում է գրականության դասավանդման ժամանակ:

Միջին դասարաններում հաղորդվում են կենսագրական հակիրճ տեղեկություններ, ուսումնասիրվում են նշանավոր գրողների առանձին երկեր, ուսուցանվում տարրական գրականտեսական գիտելիքներ:

Բարձր դասարաններում արդեն այդ հիմքի վրա ուսումնասիրվում են հայ գրականության պատմություն, անվանի գրողների կենսագրություններ ու ամբողջական ստեղծագործություններ, ավելի մանրամասն գրականտեսական գիտելիքներ և կատարելագործվում են գեղեցիկ խոսքի հմտություններ:

Հայ գրականության պատմությունը տրոհվում է բաժինների:Պատմագրության մասին անցնելիս ամենից առաջ թարմացվում են աշակերտների իմացական գիտելիքները: Նրանք շատ հակիրճն ներկայացնում են Արշակունիների թագավորության, մարզպանության և արաբական արշավանքների ժամանակաշրջանում տեղի ունեցած կարևորագույն անցքերի մասին:

Ես՝ դասավանդող ուսուցիչս, նրանց տեղեկություններ եմ հաղորդում այդ ժամանակաշրջանի մշակութային կյանքի, հատկապես հայկական գրերի ստեղծման, Մեսրոպ Մաշտոցի, պատմագրերի, փիլիսոփաների ու գիտնականների վերաբերյալ: Ես նշում եմ, որ հայկական գրերի ստեղծումից հետո հայ գրականությունն սկզբնավորվում ու զարգանում է ոչ թե պատմագրությունից անջատ, այլ նրա հետ միաձույլ, միահյուսված կերպով: Ուստի հայ պատմագիրների աշխատությունները կրում են պատմական ու գրական բնույթ' աղբյուր ծառայելով հայ ժողովրդի թե' պատմության, և թե' գրականության ուսումնասիրման համար:

Ճիշտ հասկանալու համար ես ընտրում եմ աշխատություններից հատվածներ, որոնք կրում են գրական բնույթ: Ավելի բնորոշ հատվածները կարդում եմ և բացատրում դրանց կարևորությունը: Դրա շնորհիվ աշակերտներն ավելի կոնկրետ պատկերացում են կազմում միջնադարի հայ գրականության մասին:

Աշակերտների համար ավելի հետաքրքրական կարող են դառնալ Փավստոս Բուզանդի, Եղիշեի և Մովսես Խորենացու աշխատություններից ընտրված գրական բնույթի հատվածները:

Փավստոս Բուզանդ



Փավստոս Բուզանդի (5-րդ դար) «Հայոց պատմություն»-ն և ընդգրկում է կես դարից ավելի տևող ժամանակաշրջան (330-380): Այդ աշխատության համար աղբյուր են ծառայել գլխավորապես ժողովրդական Բանավոր ստեղծագործությունները, ավանդավեպերը, «Պարսից պատերազմը», զանազան զրույցներ, լեգենդներ, երգեր և այլն: Ինքը՝ Բուզանդը, ունենալով բանաստեղծական մեծ ձիրք, կարողացել է հմտորեն օգտվել ժողովրդական բանահյուսությունից և իր աշխատության մեջ տալ իսկական գեղարվեստական ստեղծագործության նմուշներ: Հետաքրքիր հատվածներ են այն գլուխները, ուր մեծ վարպետությամբ խոսվում է արշակ թագավորի և Վասակ Մամիկոնյանի, ինչպես նաև պարսից Շապուհ արքայի դեմ նրանց մղած ազատագրական պատերազմի մասին: Գրանցում կան այնքան գունագող ու սրտառուչ պատկերներ, որ ընթերցողի վրա թողնում են խոր, անջնջելի տպավորություն: Նրա գրքի գլուխները կոչվում են դպրություններ: Բուզանդը հրաշալի պատմող է: Նրա ոճի շատ բնութագրական է զրույցի գրական տեսակը, ինչը շատ նպատակահարմար է կարճ դիպաշարերի համար: Բուզանդի գիրքը հրաշապատում է, որի ակունքը «Աստվածաշունչ»-ն է: Նրա գիրքը պատմական հերոսների մի պատկերասրահ է, իրական դեպքերի հետ միախառնված հրաշապատում, հեքիաթի մի հիասքանչ համաձուլվածք, մի կուռ շղթա:

Կարծում եմ, որ Բուզանդի «Հայոց պատմություն»-ից վերցրած այդպիսի նյութերի ընթերցումն աշակերտներին կտա ոչ միայն միջնադարի հայ գրականության մասին, այլև նրանց կնախապատրաստի Ռաֆֆու «Սամվել» վեպի ուսումնասիրման համար, որովհետև նա իր պատմավեպը գրելիս, որպես աղբյուր օգտագործել է նաև այդ աշխատությունը: Վեպը զուգակցվում է գեղեցիկ նկարագրություններով, հոգեբանական վիճակներով, բնության տեսարաններով, ճոխ բառապաշարով:

Եղիշե

Եղիշեն (5-րդ դար) վաղ միջնադարի հայ պատմագրության ամենափայլուն դեմքերից է: Նա թե՛ խոշորագույն պատմագիր է, և թե՛ մեծատաղանդ վիպասան, ուստի վրա «Վարդանանց պատերազմ» աշխատությունը պատշաճ ուշադրության է արժանանում:

Ես աշակերտներին ծանոթացնում եմ Եղիշեի կյանքին, մեզ հասած կենսագրական պատառիկներին: Նա եղել է 451 թվականի պատերազմի ականատեսն ու մասնակիցը, պատմիչն ու հայ ժողովրդի ամենասիրելի հեղինակը: Նա օժտված է եղել բնածին տաղանդով, արվեստագետի ճկուն մտքով:

Պատմիչի կյանքի և գործունեության մասին քիչ բան գիտենք, և այդ քիչը հենց այն է, որ պահել և հասցրել է մեզ ավանդությունը, որի համաձայն՝ Վարդանանց պատմագիր Եղիշեն եղել է Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կրտսեր աշակերտը, որ նրանց բացած ուսումնական կենտրոններում հայերենի հետ, անշուշտ, սովորել էր հունարեն, ասորերեն և պարսկերեն:

Ուսումը կատարելագործելու նպատակով Եղիշեն Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի և այլոց հետ մեկնել է Արևմուտք՝ այն ժամանակվա գիտական կենտրոնները: Հայրենիք

վերադառնալուց հետո նա եղել է Վարդան զորավարի զինվորը և դպրապետը: Հայոց զորքերի նահատակությունից հետո թողնում է զինվորական գործը և դառնում է հոգևորական, ճգնում է Մոկաց աշխարհի վանքերից մեկում, որտեղ էլ գրում է Վարդանանց պատմությունը: Հետագայում նրա բնակության տեղը հովիվների միջոցով հայտնի է դառնում և հռչակվում ամենուր: Այնուհետև բնակվում է Ռշտունյաց գավառում, այդ այրի անուն էլ այդուհետ անվանում են Եղիշե, որտեղից էլ մահանում է: Նրան թաղում են այդ վանքի բակում: Հաշվում են, որ նա ապրել է մոտ 60 տարի:

Ես աշակերտներին կենսագրական տեղեկությունները հաղորդելուց հետո նրանց ներկայացնում եմ պատմիչի աշխատությունը՝ «Վարդանանց պատերազմը». Նշում եմ, որ

նյութը կազմում է 5-րդ դարում հայ-պարսկական պատերազմը, հայ ժողովրդի հերոսական պայքարը, Վարդան Մամիկոնյանի սխրանքներով լի կյանքը: Նշում եմ, որ գրքում առանձնահատուկ ընդգծված է հայրենասիրության գաղափարը:

Ըստ Եղիշեի Վարդան Մամիկոնյանի և հայոց պատերազմի մասին գրելու խնդրանքը եղել է երեց Դավիթ Մամիկոնյանի կողմից: Այսպես է գրում Եղիշեն. «Այն գործը, որ պատվիրեցիր, կատարեցի, ով առաքինի, Հայոց պատերազմի մասին հրամայեցիր գրել, որի մեջ քչերի հանդեպ շատերն առաքինի գտնվեցին: Ես առաջնորդվել եմ այս նշանաբանով՝ «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»»:

Այնուհետև կարդում եմ հետաքրքիր տողեր, որոնք դարերի ընթացքում չեն կորցրել իրենց ուժն ու թարմությունը: «Չհասկացված մահը մահէ, հասկացված մահը՝ անմահություն», բացատրում եմ, որ ով որ չգիտե, թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում: Այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից: Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգիտությունը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր լինել, քան՝ մտքով կույր: Ինչպես որ հոգին է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից:

Եղիշեն, այդ հաղափարով տոգորված, նյութը շարադրում է այնքան հուզիչ և գրավիչ, որ ոգևորում ու ոթորկում է ընթերցողին, մտքով փոխադրում դարերի խորքը և նրա աչքերի առջև պատկերում հայ ժողովրդի մղած հերոսամարտը՝ հանուն հայրենիքի ազատության ու անկախության:

Այնուհետև ես խոսում եմ «Վարդանանց պատերազմի» հյուսվածքի, կառուցվածքի մասին: Եղիշեն պատմական դեպքերի ընթացքը՝ ծագումը, զարգացումը, հերթագայումն ու տրամաբանական վախճանը, շարադրում է հետաքրքրաշարժ պատմելաձևով, առանց արհեստական անցումների և չորուցամաք մանրապատումների: Ես աշակերտների ուշադրությունը բևեռում եմ Եղիշեի երկի գործող անձանց դիպուկ բնութագրումների վրա:

Այդ երկում դրական հերոսները համախմբված են հայոց զորավար Վարդան Մամիկոնյանի շուրջը և նրա առաջնորդությամբ պայքարում են հայրենիքի ազատության համար: Բացասական հերոսները, ներառյալ նաև Վասակ Սյունին, համախմբված են պարսից Հազկերտ թագավորի շուրջը և նրա հորդորանքով ամեն կերպ ձգտում են ոչնչացնել Հայաստանի ազատությունը, արմատախիլ անել ամենը, ինչ հայկական է, սուրբ ու նվիրական է հայ ժողովրդի համար:

Եղիշեն դրական հերոսների մասին խոսում է շատ ջերմ, սորիով, մեծարանքով ու համակրանքով, օրինակ՝ Մամիկոնյանին համարում է քաջ, արի, կորովի, մեծ, ազնիվ,

առաքինի, անձնազոհ և այլն: Մարդկային լավագույն հատկություններով է օժտում նաև մյուս հայրենասեր հերոսներին, դրվատում է մանավանդ ազատագրական պայքարի դուրս ելած ժողովրդին՝ շինականներից մինչև հայրենասեր իշխաններն ու հոգևորականները: Դրան հակառակ՝ պարսից զավթիչներին ու հայ դավաճաններին Եղիշեն ներկայացնում է իրենց հակամարդկային արարքներով: Օրինակ՝ պարսից բանակի զորավարին պատկերում է որպես չարության վիշապ, որը, իր ամուր որջում նստած է կեղծավորությամբ անվախ մարդու տեսք ընդունած, հեռավորներին սաստում է ահարկու ձայնով, իսկ մերձավորների վրա օձի նման ֆշշացնում է սողալով: Պարսից Հազկերտ թագավորին նա համարում է վայրագ, արյունարբու, չարաբարո, մարդախողխող բռնակալ:

Այնուհետև ներկայացնում եմ, թե ինչպես է Եղիշեն բուռն զայրույթով ու ատելոիթյամբ խոսում ազգուրաց Վասակ Սյունու մասին, նրա մեջ մարմնավորում դավաճանի բոլոր նողկալի գծերը: Եղիշեի բնութագրմամբ նա խորամանկ է, խարդախ, խաբեբա. Ուխտադրուժ, հայրենադավ, ագահ, բանսարկու, անկուշտ, ընչաքաղց, գոռոզամիտ, ամբարտավան, բայց հարկ եղած դեպքում նաև՝ փոքրոգի, քծնող, կեղծավոր ու շողոքորթ, այսինքն՝ մի հրեշավոր մարդ, որն իր նպատակին հասնելու համար կանգ չի առնում ոչ մի միջոցի առջև, ոտնահարում է ամեն սրբություն, պատրաստ է հոշոտելու արյունակից ազգականներին ու հարազատներին:

Հարցով դիմում եմ աշակերտներին.

Ի նչ է պատմում մեզ այս գրքում քաղցրազրուցիկ Եղիշեն: Նա իր պատմությունն սկսում է Հայաստանում Արշակունյաց հարստության հաստատումից (428թ.), երբ Հայաստանը դառնում է պարսկական պետության մի մարզ և կառավարում է մարզպաններով: Սկզբնական շրջանում պարսից պետությունը ազատ է թողնում քրիստոնեությունը Հայաստանում՝ մինչև Հազկերտ 2-րդի թագավորության սիզբը, որը բացարձակ թշնամություն է սկսում քրիստոնյաների դեմ և նույնիսկ հարձակվում է Բյուզանդական կայսրության վրա:

Այսպես Հազկերտը տարեցտարի Պարսկաստան է կանչում զանազան երկրների, այդ թվում նաև հայոց երկրի իշխողներին և օգտվելով այդ երկրների

անօգնական վիճակից՝ հալածանք է սկսում քրիստոնյաների դեմ: Ոմանց խաբում է ոսկով ու արծաթով, ուրիշներին՝ առատ պարևներով, շատերին ագարակներ և գյուղեր նվիրելով, ոմանց էլ՝ մեծամեծ իշխանություններ շնորհելով և խոստանալով:

Այս անիրավությունները նկարագրելով Եղիշեն ասում է. «Այսպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարաշուք անարգութիւն և հայրենի ազատութիւնն չարաչար

կույր ի ծառայութեան մարդախողող բռնատրին», որը նույնիսկ հաշիվ չէր առնում այն, որ իր հարազատ եղբայրներին հայ նախարարները սնուցել էին իրենց մայրերի կաթով:

Այս անցքերը տեղի էին ունենում 450-451 թվականների ձմռանը: Պարսից պետության մեծ հազարապետն էլ եկեւնստել էր Հայաստանի սահմաններին մոտիկ Փայտակարանում, իր մոտ է կանչել Վասակ Սյունուն և խոստովանով հայոց թագավրությունը' աշխատում էր նրա միջոցով հայոց միաբանությանը քայքայել, որպեսզի թագավորի կամքը կատարվի:

Ես նրանց նախապատրաստում եմ այն մեծ ու ճակատագրական մենամարտը ներկայացնելու: Ճակատամարտն արդեն անխուսափելի էր: Վարդան սպարապետը իր բազմաթիվ համախոհներով' վաթսունվեց հազարանոց բանակի գլուխ անցած գալիս և բանակ է դնում Տղմուտ գետի ափին' Ավարայրի դաշտում:

Վարդան Մամիկոնյանի գեղեցիկ ճառով դիմում է իր զինվորներին, քաջության ու համարձակության, անվեհության հորդոր է կարդում իր զորականներին: Ճառը վերջացնելով հետևյալ խոսքերով. «Երկիլղ թերահաւատութեան է նշան, զթերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, և երկիլղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»:

Կամ հետաքրքիր է նաև այս տողերը. «Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիս, բայց միայն յարութիւնս քաջութեան' վատութիւն մի խառնեսցուք»:

Ապա այս միտքը ներկայացնում եմ աշխարհաբար. «Վախը թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից, նրա հետ էլ թող վախը փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»:

«Եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, մահը ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»:

Տեղի է ունենում Ավարայր ճակատամարտը: Հայերն իրենց խիզախ զորավարների և արի սպարապետի ղեկավարությամբ քաջությամբ հրաշքներ են գործում և տեղ-տեղ սաստիկ նեղն են լծում պարսիկներին, բայց վերջ ի վերջո ստիպված են լինում տեղի տալ և պատերազմի դաշտը թողնել պարսիկներին, որոնք թե թվով մի քանի անգամ գերազանցում էին, և թե' ունեին ռազմական թզերի ահագին բազմությունը, որից բոլորովին զուրկ էին հայերը: Պատերազմի դաշտում Վարդանի և իր համհարզների հետ ընկան 1036 հոգի, պարսիկներից՝ եռապատիկ ավելի: Սակայն պայքարը դրանով չդադարեց, ցրիվ եկած հայոց զորքի մի մասն ամրացավ բերդերում և լեռներում և

անվեհերությամբ շարունակեց կռիվը պարսից բռնության դեմ, մինչև որ պարսից թագավորն ստիպված եղավ տեղի տալ և զիջումներ անել Հայաստանին:

Այսպիսով, պատերազմի դաշտում կրած պարտությունը վերափոխվեց իսկական հաղթության: Իսկ Վարդան Մամիկոնյանը հայ ժողովրդի պատմության մեջ մնաց որպես քաջության, խիզախության մարմնացում: իզուր չէ, որ նրան անվանում էին «Քաջ Վարդան», «Կարմիր Վարդան»: Նրա գործը սուրբ է, քանի որ նա հայրենիքի մեծ նվիրյալ էր: Սա է պատճառը, որ ժողովուրդը իր սիրելի հերոսին անմահացրեց, սրբացրեց և դասեց սրբերի շարքը: Նրա անունով կառուցեցին մատուռներ, եկեղեցիներ, որոնք դարձան ուխտատեղի:

Այնուհետև ընթերցում եմ հատվածներ գրքից, որտեղ ներկայացված են հայոց փափկասուն տիկնիկների հայրենասիրական և գնահատելի արարքները:

Ահա մի քանի հատված այդ նկարագրությունից. «Փոշոտվեցին, ծխոտվեցին նորահարսների սրահակները ու առագաստները, և սարդի ոստայնները ձգվեցին նրանց հարսնարաններում, կործանվեցին նրանց դահլիճների բարձր գահերը, և խանգարվեցին նրանց սեղանների պարագաները, ընկան-կործանվեցին նրանց ապարանքները և տապալվեցին ու ավերվեցին նրանց ապաստան ծառայող ամրոցները: Չորացան նրանց ծաղկանոցների բուրաստանները և արմատախիլ եղան նրանց գինեբեր այգիների տունկերը:

Հայոց աշխարհի փափկասուն տիկինները, որոնք փափուկ կյանքով ու քնքուշ մեծացել էին բազմոցների ու գահավորականների մեջ, շարունակ բոբիկ ոտներով էին գնում աղոթատները: Շատ ձմեռների սառույցներ հալվեցին, գարուն հասավ և նոր ծիծառներ եկան: Նրանք երբեք չտեսան իրենց անձկալիներին, նրանց աչքերը կարոտ մնացին նրանց երեսների ցանկալի գեղեցկությունը տեսնելու...

Ես անդրադառնում եմ Եղիշեի երկին, որը գրված է ցույց տալու համար, որ հայրենասերը, ազատություն սիրողը ոչ մի զոհաբերության առաջ կանգ չի առնի, հայրենիքի սիրո և խղճի ազատության համար ամեն նեղություն ու տառապանք հանձն կառնի, կյանքն անգամ չի խնայի, որովհետև «չհասկացված մահը մահ է, հասկացված մահը' անմահություն»: Ով որ չգիտի թե ինչ է մահը, վախենում է մահից, իսկ ով գիտի մահը, նրանց չի երկնչում: Այս պատճառով էլ հայրենիքի ազատության համար մարտնչող լավերն ու առաքինիները նրա աչքին ավելի լավ ու կատարյալ են երևում, իսկ վատերն ու ուրացողները' ավելի վատթար և ավելի ատելի:

Ես, տալով Եղիշեի «Վարդանանց պատերազմ»-ի գանահատականը, մատնանշում եմ այն իրողությունը, որ նա ոգեշնչել է բազում սերունդների և մեծ

ազդեցություն ունեցել ոչ միայն միջնադարյան, այլև նոր և նորագույն գրականության վրա: Նա իր դրոշմն է դրել Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վրա:

Իմ ներածական խոսքից հետո աշակերտները հաճույքով կարդում են ու մեկնաբանում Եղիշեի «Վարդանանց պատերազմից» հատվածներ, տալիս են իրենց գնահատականները: Ամեն դեպքում աշակերտները սիրով են ներկայացնում հայ կանանց խիզախությունները, անձնազոհությունները:

Պետք է նաև բարձր գնահատական տալ Եղիշեի ճոխ լեզվին: Իզուր չէ, որ նրան անվանել են «ավարայրի երգիչ» կամ «Ավարայրի բլբուլ»:

Մովսես Խորենացի



Մովսես Խորենացին 5-րդ դարի հայ դասական մատենագրության ամենանշանավոր դեմքն է: Նրան անվանել են «Տիեզերահռչակ», «Մեծն Մովսես», «Քերթողահայր»: Նա վաստակել է «Հայոց պատմահայր» պատվատիտղոսը: Խորենացին մեզ հայտնի է որպես մատենագիր, մտածող ու Գործիչ:

Ես, խոսելով Խորենացու կյանքի ու գործունեության մասին, առանձնահատուկ սիրով ներկայացնում եմ նրա ուսումնառության տարիները, հատկապես ակնածանքով եմ խոսում նրա ուսուցիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի մասին: Նրանց աշակերտելուց հետո Խորենացին մի խումբ աշակերտների հետ մեկնում է Ալեքսանդրիա, որը համարվում էր ժամանակի գիտական ու կրթական խոշոր օջախներից մեկը: Այստեղ նա հմտանում է քերթողական, ճարտասանական քերականական արվեստների մեջ, կատարելագործում հունարենի իր իմացությունը: Հայրենիք վերադառնալուց հետո նա չի գտնում իր սիրելի ուսուցիչներին, որոնք արդեն մահացել էին: Նա ցավով է գրում. «Ավաղ, չկային մեր սիրելիները, որոնք մեր հարսանիքների պիտի պարեին...
այժմ գերեզմանի վրա ողբեր եմ ասում...»:

Այնուհետև ներկայացնում եմ Խորենացու գրական արժեքները' ուշադրությունս բևեռելով «Հայոց պատմություն» գրքի վրա: Գիրքը կազմված է 3 գլուխներից.

1. «Հայոց մեծերի ծննդաբանությունը», որը ընդգրկում է հայոց պատմությունն ամենասկզբից մինչև Ք.ծ.ա. 132 թվականը
2. «Պատմություն միջին դարերի», ընդգրկում է Ք.ծ.ա. 132թ. Մինչև 318 թվականը
3. «Մեր հայրենիքի պատմության ավարտը»' 318-428թթ, ժամանակահատվածները:

Մովսես Խորենացին պատմական նյութը հայթայթելու նպատակով ուսումնասիրել է իր ժամանակի Հայաստանի քաղաքները, բերդերը, դրանց հետ կապվածավանդությունները: Այդ ուսումնասիրությունների արդյունքն են գրքի մեջ տեղ գտած այդ քաղաքների, բերդերի նկարագրությունն ու դրանց հետ կապված

պատմությունները: Այդպիսի քաղաքներից են Երվանդակերտը, Դառնին, Արտաշատը:

Նրա «Հայոց պատմություն» գիրքը ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը ամենախոր անցյալից մինչև իր ապրած ժամանակաշրջանը: Խորենացին իր պատմութոյունը գրելիս օգտագործել է բազմաթիվ գրավոր սկզբնաղբյուրներ և ժողովրդական ստեղծագործություններ: Նրա շնորհիվ մեզ են հասել հայ ժողովրդական բանահյուսության արժեքավոր նմուշներ:

«Հայոց պատմության» մեջ կան նաև ինքնուրույն գրական գոհարներ, որոնց հետ ծանոթացնում եմ աշակերտներին: «Հայոց պատմությունը» սկզբից մինչև տոգորված է հայրենասիրության ոգով, հայրենիքի ազատության ո անկախության գաղափարներով: Նա դրվատանքով է ներկայացնում հայ ժողովրդի քաջարի զավակներին, նրանց սխրանքը, աղեկեզ ու դառնակսկիծ ողբում հայկական պետականության կործանումը, ամբողջ հոգով բաղձում նրա վերականգնումը: Նա անողոքաբար դատապարտում է հայրենիքի ճակատագրի նկատմամբ անտարբեր մարդկանց, քարասիրտ, ուխտադրուժ, հայրենադավ, եսամոլ ու ընչաքաղց անձանց: Այս ամենն իր ցայտուն, վառ արտահայտությունն են գտել Խորենացու «Հայոց պատմության» հատկապես երրորդ գրքի վերջին հատվածում:

Աշակերտներին ներկայացնում եմ երրորդ գրքի վերջին հատվածը, որը կոչվում է «Ողբ»: Այն ամբողջությամբ ընթերցում եմ, հետո բացատրում եմ նրանում արտահայտված խոհերն ու զգացմունները: Կանգ եմ առնում առաջին պարբերության վրա, ուր ասված է. «Ողբում եմ քեզ հայոց աշխարհ, ողբում եմ քեզ բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, որովհետև վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, հիմնավորեց տգիտությունը, չարախոսությունը»:

Այնուհետև ուշադրությունն բևեռում եմ այն տողերի վրա, ուր Խորենացին հայրենի երկրի թշվառ գոյավիճակի պատճառը համարում է ոչ միայն արտաքին թշնամիների հայակործան ձգտումները, ջարդերը, ավերումները, ասպատակություններն ու բռնությունները, այխ ներքին ապականված տարրերի դավաճանական, անսիրտ, անհոգի, ամբարտավան արարքները: նա կրոնավորներին անվանում է կեղծավոր, եսասեր, ցուցամոլ, սնափառ, բանսարկու, անհավա, իշխաններին' ամստամբ, գողերին գողակից, կաշառակեր, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհն ավերող, աղետասեր, իսկ թագավորներին' շար, խստաբարո, անխիղճ և անողորմ և այլ: Այդ ամենի հետևանքով կործանվում է երկիրը, տառապում ժողովուրդը, հալածվում են հայրենասեր մարդիկ, տանջվում ու հեծում են խեղճ մարդիկ, շինականները: Այստեղ ես նորից ընթերցում եմ «Ողբ»-ի եզրափակիչ հատվածը. «Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են

տալիս: Կառավարիչները կարֆ են պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախում են այս ու այն կյանքի համար: Տները թալանվում են, եղածը հափշտակում, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, ավերվում են քաղաքներ, բանտվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, անվերջ սովեր, հիվանդություններ են ի հայտ գալիս, շատանում են համաճարակները...»

Ես անդրադառնում եմ նաև հետաքրքիր հատվածների վրա, դրանք կարդում եմ, որպեսզի գիրքը էլ ավելի տեսանելի դառնա աշակերտներին: Օրինակ՝ աշակերտները կարդում են հատվածներ Զիրավի ճակատամարտից, Երվանդակերտի մահսն: Ցույց ենք տալիս մեծ պատմիչի լեզվի բնորոշ կողմերը: Քերթողահայրը ունի հարուստ բառագանձարան, գունագեղ, զարդարուն, պարզ, հստակ, համով ու հոտով կենդանի լեզու: Նկատելի են նաև թևավոր խոսքերը, գեղեցիկ արտահայտությունները: Այդ ամենի շնորհիվ պատմահայրը իր խոսքը դարձնում է ավելի գրավիչ, հուզական և պատկերավոր:

Աշակերտներին հիշեցնում եմ, որ հայ գրերի գյուտից հետո հորինվում են նաև եկեղեցական շարականներ, ներբողներ, մեղեդիներ, աղոթքներ՝ եկեղեցիներում երգելու համար: Այսինքն ստեղծվում է եկեղեցական բանաստեղծություն:

Ես գաղափար եմ տալիս նաև այն մասին, որ գրերի ստեղծումից հետո, բացի կրոնական, պատմական գրքերից, թարգմանվում են աշխարհիկ երկեր, գեղարվեստական գրականության նմուշներ: այս ժամանակաշրջանը հարուստ էր թարգմանական գրականությամբ: Դրա համար էլ 5րդ դարը անվանեցին Ոսկեդար: Վաղ միջնադարում ինքնուրույն և թարգմանական գրքերը գրվում էին հին հայերենով, այսինքն՝գրաբարով:

Վերջնարդյունք

Հետազոտական աշխատանքի վերջում հասնել նրան, որ աշակերտները կարողանան սիրել, գնահատել, արժևորել ոսկեդարյան գրականության հանճարներին, կարդալ նրանց աշխատությունները, ճիշտ ընկալել ժամանակաշրջանը և արծարծվող հարցերին տալ ճիշտ պատասխան:

Կարծում եմ երեխաների մոտ կարողացա արթնացնել սեր դեպի մեր հին մշակույթը, որի հիմքերի վրա ձևավորվել է արդի գրականության մի ճյուղը՝ պատմավիպասանությունը:

Եզրակացություն

«Հայ գրականությունը 5-9-րդ դասարաններում» ակնարկային թեմայի ուսուցումը հետաքրքիր դարձնելու համար ես օգտագործում եմ որոշ զննական պարագաներ, օրինակ՝ դասական պատմագիրների աշխատությունների ընդօրինակված տիտղոսատետրերը, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու, Վարդան Մամիկոնյանի դիմանկարները, Ավարայրի ճակատամարտի նկարները, Հայաստանի մայրաքաղաքների նկարները, Հայաստանի պատմական քարտեզը և այլն:

Օգտագործված գրականություն

1. Հայ մշակույթի նշանավոր գործիչներ, Երևան 1976թ., Համալսարանի հրատարակչություն
2. Թ. Ջուհարյան, Հայ գրականության մեթոդիկա, Երևան 1980թ., Համալսարանի հրատարակչություն
3. Դ. Գասպարյան, Գրականություն, 7-րդ դասարան, Երևան 2013թ., Տիգրան Մեծ հրատարակչություն
4. Եղիշե «Վարդանանց պատերազմը»,
5. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն»